

*Հաստատված է Երևան քաղաքի ավագանու
քաղաքաշինության, հողօգտագործման,
և բնապահպանական հարցերի
մշտական հանձնաժողովի
17.09.2009թ. հ.2/1 որոշմամբ*

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԳԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ թիվ 1-Ն որոշման 14 հոդվածի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության, հողօգտագործման և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովը որոշում է հաստատել քաղաքաշինության, հողօգտագործման և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) կանոնակարգը:

1.2 Հանձնաժողովն ունի 12 անդամից բաղկացած հետևյալ կազմը՝

ա) հանձնաժողովի նախագահ, որն ընտրվում է ավագանու նիստում՝ օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով,

բ) հանձնաժողովի նախագահի տեղակալ, որն ընտրվում է ավագանու նիստում՝ օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով,

գ) հանձնաժողովի քարտուղար, որն ընտրվում է հանձնաժողովի նիստում՝ անդամների կողմից,

դ) հանձնաժողովի անդամներ (թվով տասը):

1.3 Հանձնաժողովի կազմը սահմանվել է Երևան քաղաքի ավագանու կողմից և հաստատվել է քաղաքապետի որոշմամբ:

1.4 Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, Երևան քաղաքի ավագանու կանոնակարգով, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

2. Հանձնաժողովի խնդիրները և լիազորությունները

2.1 Հանձնաժողովի խնդիրներն են.

- ա) ուսումնասիրել ավագանու քաղաքաշինության, հողօգտագործման և բնապահպանական հարցերին առնչվող նախաձեռնություններն ու փոփոխությունները և տալ դրանց վերաբերյալ եզրակացություն,
- բ) ուսումնասիրել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ կառավարության և ՀՀ գործադիր մարմինների օրենսդրական այն նախաձեռնությունները, որոնք առնչվում են Երևան քաղաքի կառավարմանը և դրանց վերաբերյալ կարծիք ներկայացնել,
- գ) առաջարկություններ ներկայացնել քաղաքաշինության, հողօգտագործման և բնապահպանական հարցերին վերաբերվող օրենսդրության կատարելագործման և լրամշակման, Երևանի գլխավոր հատակագծի իրացման կամ անհրաժեշտ լրացումներ կամ վերամշակումներ կատարելու, համայնքի վարչական շրջանների գոտիավորման նախագծերի, ճարտարապետական միջավայրի կատարելագործման, համայնքի՝ բնական աղետներից պաշտպանվածության, բնապահպանության, համատիրությունների հետ կապված հարցերով:
- դ) հետամուտ լինել հանձնաժողովի և ավագանու որոշումների իրականացման ընթացքին,
- ե) հանձնաժողովին կից կազմել քաղաքաշինական խորհուրդ, առանձին հարցերի քննարկման համար հրավիրել մասնագետ փորձագետների:

2.2 Հանձնաժողովի լիազորություններն են.

- ա) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աջակցությամբ կազմակերպել հանձնաժողովի կազմակերպչական, փաստաթղթային, տեղեկատվական, վերլուծական և մասնագիտական գործունեությունը,
- բ) ապահովել հանձնաժողովի աշխատանքների լուսաբանումը և հասարակական քննարկումը,
- գ) ամփոփել Երևանի ավագանու և քաղաքապետարանի աշխատակազմի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները և կայացնել համապատասխան որոշում՝ օրենքների և այլ իրավական պահանջներին փաստաթղթերի համապատասխանության կամ անհամապատասխանության մասին,
- դ) որոշել հանձնաժողովի հաջորդ նիստերի անցկացման տեղը, ժամկետները, ինչպես նաև հրավիրվող պաշտոնատար անձանց կազմը,
- ե) ընդունել որոշումներ բաց քվեարկության միջոցով,

զ) պահանջել քաղաքապետից, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարից, վարչական շրջանների ղեկավարներից, Երևանի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպություններից անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկանքներ,

է) օրենքով, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորությունների իրականացումը:

3. Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը

3.1 Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

3.2 Հանձնաժողովի նիստերն իրավագոր են հանձնաժողովի առնվազն չորս անդամների և նախագահի կամ նախագահի տեղակալի կամ հանձնաժողովի որոշմամբ լիազորված անդամի մասնակցության դեպքում:

3.3 Հանձնաժողովի արտահերթ նիստը գումարվում է հանձնաժողովի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ նախաձեռնողների սահմանած ժամկետում:

3.4 Նիստն սկսվում է օրակարգի հաստատումով: Մինչև օրակարգի հաստատումը այլ հարցեր չեն քննարկվում: Օրակարգի հաստատումից հետո ներկայացվում են հարցերը՝ ըստ հաջորդականության, քննարկվում և մտքերի փոխանակումից հետո դրվում քվեարկության:

3.5 Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությամբ մասնակցած հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ են քվեարկել հանձնաժողովի առնվազն 4 անդամ:

3.6 Հանձնաժողովի կողմից որոշումներ ընդունելիս ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

3.7 Երևանի ավագանու կանոնակարգի 20-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի նիստում, բացի ավագանու անդամներից, կարող են ներկա գտնվել քաղաքապետը կամ նրա առաջին տեղակալը: Հանձնաժողովն իր աշխատանքներին կարող է հրավիրել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, Երևանի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին, ինչպես նաև աշխատակազմի քարտուղարին՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

3.8. Նիստերն արձանագրվում են հանձնաժողովի քարտուղարի, իսկ նրա բացակայությամբ՝ ներկա անդամներից մեկի կողմից: Նիստի արձանագրությունը, որը ներառում է նաև հանձնաժողովի նիստում քննարկված բոլոր հարցերի

քվեարկությունների անվանական արդյունքները, ստորագրում է հանձնաժողովի նախագահը:

4. Հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը

4.1. Հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ նախագահի տեղակալը.

ա) գումարում և ղեկավարում է հանձնաժողովի նիստերը,

բ) նախագահը գումարում է հանձնաժողովի արտահերթ նիստ իր նախաձեռնությամբ, սահմանված ժամկետում,

գ) կազմակերպում է հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման աշխատանքները,

դ) կազմակերպում է հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի՝ հանձնաժողովի անդամներին նախնական ծանուցումը՝ ուսումնասիրության և եզրակացություն տալու համար,

ե) հանձնաժողովի նախագահի տեղակալի և քարտուղարի հետ միասին ամփոփում է Հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ներկայացված եզրակացությունները, որից հետո դրանք ներկայացնում է հանձնաժողովի հաստատմանը,

զ) հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները ներկայացնում է Երևանի քաղաքապետին և նրա առաջին տեղակալին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև Երևանի ավագանու նիստում,

է) իրականացնում է հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքների նկատմամբ հսկողությունը,

ը) ստորագրում է հանձնաժողովի կողմից ընդունված փաստաթղթերը,

թ) իրականացնում է օրենքով, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

5. Հանձնաժողովի քարտուղարը

5.1. Հանձնաժողովի քարտուղարը.

ա) Հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է հանձնաժողովի նիստերի տեղի ու ժամանակի մասին,

բ) կազմակերպում է հանձնաժողովի նիստերի արձանագրումը, ստորագրում Հանձնաժողովի կողմից ընդունված փաստաթղթերը և իրականացնում է հանձնաժողովի գործավարությունը,

զ) Հանձնաժողովի նախագահի հետ միասին ամփոփում է հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ներկայացված եզրակացությունը:

6. Հանձնաժողովի անդամը

6.1. Հանձնաժողովի անդամը.

ա) մասնակցում է հանձնաժողովի նիստերին

բ) մասնակցում է հանձնաժողովի կողմից կազմակերպված քվեարկություններին,

գ) Ծանոթանում է հանձնաժողովի նիստերի արձանագրություններին և ստորագրում դրանք,

դ) Ուսումնասիրում և եզրակացություն է տալիս քննարկման ենթակա փաստաթղթերի վերաբերյալ,

ե) Հանդես է գալիս առաջարկություններով և նախաձեռնություններով,

զ) Իրականացնում է օրենքով, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

*Երևան քաղաքի ավագանու
քաղաքաշինության, հողօգտագործման,
և բնապահպանական հարցերի
մշտական հանձնաժողովի նախագահ Յ. Պողոսյան*